ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ս. Դեղոյան «31» օգոստոս 2022թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևան մարզ

Մալաթիա-Սեբաստիա համայնք

հ. 179 հիմնական դպրոցի III^{Բ}
ուսումնական հաստատության անվանումը, դասարանը

Եիազարյան Գոհար Նորիկի
դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

«2022, 2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)* 3-րդ բ դասարանում սովորում են 24 աշակերտներ. 12 տղա, 12 աղջիկ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ: Կոլեկտիվը համերաշխ է, կազմակերպված: Պատրաստ են միմյանց օգնելու: Կան շնորհալի աշակերտներ: Դասարանում կան թույլ սովորող աշակերտներ Ենգեյան Ալենը,Խաչատրյան Գևորգը, Հարությունյան Հարությունը: Լավ սովորող աշակերտները խրախուսվել են գովասանագրերով և շնորհակալագրերով:Դասարանում կա վարքային խնդիր ունեցող մեկ աշակերտ՝ Խաչատրյան Արթուր: Նրա հետ տարվում է անհատական աշխատանք:
   Նոր ուստարում անհրաժեշտ է շտկել, ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրներին
   1. Բարձրացնել ուսման որակի արդյունավետությունը
   2. Կիրառել նոր մեթոդներ
   3. Կազմակերպել առարկայական էքսկուրսիաներ
   4. Կազմակերպել վիկտորինաներ, ցերեկույթներ
   5. Ուսման մեջ հետ մնացող աշակերտների հետ տանել լրացուցիչ աշխատանքներ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Օգնել աշակերտներին հարմարվելու դպրոցական կարգուկանոնին, ենթարկվելու դպրոցական պահանջներին: Ուսուցչի օգնականի հետ կազմակերպել արտադասարանական պարապմունքներ հետ մնացող աշակերտներին օգնելու նպատակով: Օգնել աշակերտներին ճիշտ կողմնորոշվել և ճիշտ հաղորդակցվել շրջապատի մարդկանց հետ: Բացատրել դասագրքերը և օրագրերը ճիշտ խնամքով օգտագործելու կանոնները: Օգնել սովորողներին, որպեսզի նրանց քայլերը լինեն տրամաբանված, կիրթ, օրինակելի և աշխատասեր: Ապահովել աշակերտների մասնակցությունը համադպրոցական միրոցառումներին:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Ծանոթացնել «Մանկական Աստվածաշնչի» մի քանի պատմություններին: Բացահայտել եկեղեցու դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Դաստիարակել մեր հայրենիքին, պետությանը և եկեղեցուն նվիրված հայրենասեր, բարի ու արդար մարդիկ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ուշադրություն դարձնել աշակերտների գեղագիտական դաստիարակությանը: Զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, հասկանալու և գնահատելու կարողություն: Կարևորեն գեղագիտական արժեքները:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Ծանոթացնել ՀՀ զինված ուժերի կազմավորման պատմությանը: Պատմել արցախյան ազատամարտի, 44-օրյա պատերազմում զոհված մեր դպրոց սաների մասին: Ծանոթացնել մեր ժողովրդի հերոսական անցյալի և ներկայի պատմությանը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ուշադրություն դարձնել աշակերտների ֆիզիկական դաստիարականությանը, բացատրել օրվա ռեժիմի կարևորությունը, սպորտային խմբակներ հաճախելու անհրաժեշտությունը: Կատարել ֆիզիկական վարժություններ, հետևել սանիտարահիգիենիկ կանոններին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Զգտել, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ունենա կայուն աշխատասիրություն: Ծանոթացնել տարբեր մասնագիտությունների դերին ու նշանակությանը: Օգնել աշակերտին արժևորելու սեփական աշխատանքը և գնահատելու ուրիշների աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Սիրել բնությունը, պահպանել մաքրություն բակում, փողոցում: Մասնակցել դպրոցում կազմակերպվող շաբաթօրյակներին: Բացատրել բնության պահպանման կարևորությունը (չտրորել կանաչ տարածքներ, չջարդել ծառերի ճյուղեր): Դասասենյակում աճեցնել և խնամել սենյակային բույսեր:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ամրապնդել դպրոց-ընտանիք կապը: Ծնողը պետք է ակտիվ մասնակցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Առաջնորդվել «Դպրոցը մեր տունն է, այստեղ մենք տանն ենք» կարգախոսով: Ծնողների հետ քննարկել դպրոցին և ուսմանը առնչվող հարցեր:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
01.09	Դպրության, գիտելիքի օր:	01.09	Նիգոյան
	Բաժանել դասագրքերը:		Եղիազարյան
05.09-09.09	Այցելություն դպրոցի գրադարան:	08.09	Տոնոյան
	Անդամագրել երեխաներին գրադարանում	15.09	Եղիազարյան
12.09-16.09	Ծանոթացում ՀՀ Սահմանադրությանը, օրիներգին, զինանշանին,դրոշին:	15.09	Եղիազարյան
19.09-22.09	Զրույց ՀՀ անկախության տարելիցի կապակցությամբ:	22.09	Ն. Ավագյան
10.10-14.10	Զրույց մեր իրավունքները նպարտականությունները	13.10	Եղիազարյան
17.10-21.10	Դաս միջոցառում «Աշնան գույներ»	20.10	Եղիազարյան
01.11-04.11	Ճանապարհային երթևեկության կանոնները	03.11	Եղիազարյան
07.11-11.11	Աշխատասիրություն, կարգապահություն	10.11	Եղիազարյան
14.11-18.11	Ծանոթացնել հայ առակագրերի ստեղծագործություններին	17.11	Եղիազարյան
21.11-25.11	Այցելություն Խնկո Ապոր անվան գրադարան	24.11	Եղիազարյան
28.11-02.12	«Անվտանգության երթևեկության կանոններ» տեսաֆիլմ	01.12	Եղիազարյան
05.12-09.12	Ինչպե՞ս պաշտպանվել երկրաշարժից	08.12	Եղիազարյան
12.12-16.12	Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի	15.12	Եղիազարյան
19.12-23.12	Զնավորել դասասենյակը և կազմակերպել ցերեկույթ նվիրված Ամանորին	22.12	Եղիազարյան
09.01-13.01.23	Կրակի հետ չի կարելի խաղալ	12.01	Եղիազարյան

16.01-20.01	Պահպանենք վարվեցողության կանոնները	19.01	Եղիազարյան
23.01-27.01	«Մենք՝ մենք Հայկի թոռներն ենք»	26.01	Եղիազարյան
30.01-03.02	Ուսուցողական խաղ «Ճանապարհային երթևեկություն»	02.02	Եղիազարյան
06.02-10.02	Վատ սովորույթներ, ինչպես պայքարել դրանց դեմ	09.02	Եղիազարյան
13.02-17.02	Մեր ազգային հերոսները (Վարդան Մամիկոնյան)	16.02	Եղիազարյան
20.02-24.02	Օրվա ռեժիմը և առողջությունը	23.02	Եղիազարյան
27.02-04.03	Սիրելի գրքի էջերով	03.03	Եղիազարյան
06.03-10.03	Պահպանենք բնությունը, պահպանենք առողջությունը	09.03	Եղիազարյան
13.03-17.03	Ձիջիր քո տեղը աղջկան, դիտարկում, իրավիճակ	16.03	Եղիազարյան
20.03-24.03	Ստուգենք մեր դասարանի աղջիկների անունները	23.03	Եղիազարյան
03.04-07.04	«Մայրիկի օրը » մեր ընտանիքում	06.04	Եղիազարյան
10.04-14.04	«Կրակի հետ չի կարելի խաղալ» կրկնել	13.04	Եղիազարյան
17.04-21.04	Մեր ընտանի կենդանիները	20.04	Եղիազարյան
24.04-28.04	Երթևեկության կանոնները երեխաների խմբերով անցկացնելու դեպքում: Այցելել ծիծեռնակաբերդ	27.04	Եղիազարյան Ն. Ավագյան
02.05-05.05	Էքսկուրսիա «Բնության թանգարան»	04.05	Եղիազարյան
08.05-12.05	Դասագրքերի վիճակի ստուգում	11.05	Տոնոյան
15.05-19.05	Ես քաղաքացին եմ Հայաստանի	18.05	Եղիազարյան
22.05-26.02	«Հաղթանակների մայիս» (զրույց)	25.05	Եղիազարյան
01.06	Երեխաների պաշտպանության օր	01.06	Եղիազարյան